


Տէր իմ եւ Աստուած՝ փառք քեզ գոհութիւն ,
 Տո՛ւր ինձ զըղձւամբ բարի գործք արքայութիւն ,
 Իմ անօրէն մեղացքս՝ շնորհեա՛ թողութիւն ,
 Մեղացէս փոշման եմ՝ մեղայ Աստուծոյ :

Մի՛ թողուր զես , Տէ՛ր , առանց Աջի քոյ ,
 Վարն Սըբոյ անարատի Խաչի քոյ .
 Հայր մեղայ յերկինքս՝ եւ առաջի քոյ .
 Թողութիւն գըտանեմ՝ մեղայ Աստուծոյ :

Գոչեմ մեղայ , Տէ՛ր իմ ,՝ Աստուած ողորմած ,
 Բարերար , բազումողորմ եւ գըթած .
 Մեղաւոր ԱՐՁՈՒՆՈՒՄ՝ տո՛ւր հոգեւոր հայ ,
 Հետքս պաշար տանեմ՝ մեղայ Աստուծոյ :



Գերադասիւ Գալուստ Ծ. Վարդապետն Փափաղեանց , որ քանի մի ամսէ ՚ի վեր ՚ի Ս. Աթոռս կը գտնուի ուխտաւորական միջթարութեամբ եւ օգտփոխութեամբ իւր բազմամեայ տկարութիւնն կողդուրելու եւ զըժուարակիր ցաւերն բուժելու համար ,

իւր գրաւոր երկատիրութիւններէն հետեւեալ երկու տաղաչափութիւններն (մին իւր վաղամեակի Աշոտ որդւոյ մահուան առթիւ գրած , իսկ միւսըն Գերմաներէնէ թարգմանած) խրվբազրութեանս յանձնեց , զորս կը փութեմք յօժարութեամբ հրատարակել :

Ա Շ Ո Տ

Ա.

ԳԵՂԱՁՈՒԱՐՃ գարունն արդէն եկել էր ,
 Վարդակարմիր առաւօտով ներկուած .
 Նուրբ մառախուղ ծմակն շուրջ պատել էր ,
 Ինչպէս շղարջ՝ նորահարսի ծածանուած :
 Աշոտս յայնժամ Բեկս (1) աղբեր մօտ սիրտն ՚ի խինդ՝
 Նստած նայէր յայդ տեսարան երկնագեղ ,
 Տեսաւ ինչպէս ծառոց ոստերն խիտ առ խիտ
 Կախուած էին մեգի միջով շեղ ՚ի շեղ ,

(1) Բէկ կամ Բէկէ աղբիւր . կէս ժամ հեռի Շուշի քաղաքէն , ունի բարեհամ ջուր եւ զեղատեսիլ շրջակայք :

Ինչպէս արտայտն արտի վրայ ճախրելով
Փռաբանում էր քաղցրաձայն Արարչին ,
Յօշ մարգերի վրայ շարվում էր մեղմով
Նոր ոյժ տալու կիսաթառամ խոտերին :

Բ.

Եւ սոխակի անուշ երգն քաջոր
Յեղեղելում էր ՚ի ըսելիս Աշտին
Մերթ ընդ մերթ զով ղեփիւռների հնչելով ,
Մարգագետնի ամեն ծաղիկունք բիւրաղդի
Յոյց են տալիս քաղցրաժպիտ ակնարկմամբ
Առաւօտեան յայն՝ խաղաղ ժամն՝ Աշտին :

Այդ անսարան շքեղ վերին ազդեցմամբ
Սքանչացոյ խաղառ նորա զհոգին ,
Աստուած կանչեց՝ թառանչ քաշեց նա խորին ,
Իւր դողդոջուն սիպտակ ձեռներն իբրեւ լոյս ,
Իւր աչքերն լի ջերմաջերմ եռանդով ,
Բարձրացրուց պահ մի այնպէս յերկին կոյս ,
Ապա հեղիկ ասաւ անոյշ նա ձայնով :

Գ.

Ճշմարիտ է՝ « Ինչ որ հայրիկս ասել է ,
Թէ կայ Աստուած , որ ամեն բան յիւրն ՚ի զարդ
Հրաշագործել իմ շուրջ այս տեղ դրել է » ,
Որոյ ՚ի տես արտիկս ՚ի թինդ ցնծայ արդ ,
Եւ առաւել քան զառաւել փայլում էր
Ի վարդագեղ նորա անմեղ երեսին
Եռանդն հոգւոյն , եւ նոր սիրով վառվում էր .
Արդէն , արդէն , եւ միշտ այնպէս գեղանի
Ջերմ արտասուք աչքերիցն է վեր ածում ,
Ինչպէս շուշանն առաւօտեան զով ցօղով
Թայ է լինում , փայլն առաւել շողողում
Այնպէս Աշտոս այն օր ճոխ էր իւր գեղով :

Դ.

« Եթէ Աստուած այս աշխարհքը » , կըրկնում է ,
Այսչափ սիրուն բաներով է զարդարում ,
Ապ' այն մարդոյ ուրախութիւնն մըջափ է ,
Որ երկնքումն նորա երեսն է տեսնում :
Ո՛հ , տուր ինձ , Տէր , որ ես դարձած հրեշտակ

Այս վաղանցիկ դարնանային աշխարհքէս
Թըռչիմ, դամ ես անեղծ աշխարհըդ այդ արագ ,
Որ տեղ մայրիկըս , վաղուց է որ կանչել ես :
Եւ գուցէ նա , աւանդ , սիրով մայրենի
Յիշում է արդ իրա որդւոյ Աշոտին ։

Ե.

Իսկ ես հայրիկըս կէս մի ուրախ կէս տըրտաւմ
Լըռիկ կանգնած կանանչ թուփի քամակից ,
Ամեն խօսքին ուշիւ ակտնջ եմ դընում ,
Յափըտակուած գեղատըխուր Աշոտից :
Եւ հայրագուծ սիրով յայնժամ բորբոքուած
Խիստ տագնասպաւ մօտ Աշոտիս եմ վաղում ,
Եւ երկար ժամ նորան սըրտիս հուպ տուած ,
Շունչըս նորա շընչի հետ եմ ես խառնում :
Եւ հըրափայլ իմ աչքերիցըն ծածուկ
Վարդակարմիր ծընուտի վերայ Աշոտիս
Մին քանի կաթ թափում եմ ես արտասուք .
Ո՛հ , սաստիկ էր յայնժամ փրղձուկըն իմ սըրտիս :

Զ.

Աշոտ , տաի ապա նըմա կականմամբ .
Քո Աստուծոյն քան զայդ աղօթք զօրաւոր
Դու արել չ'ես բնաւ այդպէս եռանդեամբ .
Ձայնիդ լըսեց անշուշտ քո հայր երկնաւոր
Արդ՝ երբ հրեշտակ դարձած գընաս Տէրիդ մօտ ,
Եւ սաւառնես շուրջ երկնակեաց քո մօրը ,
Օրհնիր յայնժամ էլի այս օրըն , իմ Աշոտ ,
Եւ միտըդ բեր երկընքումըն քո հօրը :

Հ Ա Յ Ր Մ Ե Ր

Ա.

ՀԱՅՐ մեր՝ դու որ քան զաստեղըս ,
Եւ քան զարեւ բարձրումըն ես .
Որդեգրելով մեղի քեզ ,
Յաւէտ դըթաս քան սլատեա :

Բ.

Մեր օթեւանըն այս խոնարհ ,
Երկիրս ըլի քեզ տաճար .
Ուր քո անուներդ սուրբ ըլի ,
Որպէս յերկինքս լուսափառ :